ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԱՐԽԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՓԵՏՐՈՒԱՐԻ 26 -ին. Թիֆլիս. № 9.

ՄԵԾ ԳԵՍԻ ՍԵԳՈՆ

—Խնդրում եմ անուշ անէք, հիմայ սա աւելի լաւ է։ (Մեր գործիչները երբ փոխում են իրենց կաբինետները այսպէս նորանոր կերակուրներ կամ գաղափարներ են հրամցնում ժողովրդին գովելով որ այս առաջիններից լաւ է)։

ԱՌՏ. Ս. ԲԵԼԽՈՎԱ

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI Տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների։

Անիրաւներ բերք բոլոր բնաւնիրների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շաւերին ծիծաղեցնում է, շաւերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի։

Հասցէն՝ Тифлисъ Музейный пер., Редакція „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Gaucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆԵԳՐԱՆՔՆԵՐԸ

Տարեկան	5 ր.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ր.

Տարեկան	12 ր.
Կէս տարին	6 ր.
Երեք ամիսը	3 ր. 50 կ.
Մէկ ամիսը	1 ր. 20 կ.

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75% զեղչ

Զրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՑՑ *)

1911 ՓԵՏՐՒԱՐ 28 օր

26

Суббота ՇԱԲԱԹ Ղումանի 12

Փետր. 27 (կիր.).—Այսօր 4 կին մարդաթող կլինեն և 2 մարդ էլ կնգա ծեծի կենթարկուեն։ Ինվալիտ օրիորդների մեծ կարիք կզգացուի։

Փետր. 28 (բ. շ.).—Հրատարակչ. ընկ.-ը այսօր 3. Դենջեանից կրտեղեկանայ, թէ գիրք հրատարակելու համար ինչ պէտք է անել։

Մարտի 1 (գ. շ.).—Գարնան առաջին օրը։ Կրակսի տղամարդկանց գրպանների արշաւանք։ Դեղեցիկ սեռը թող շտապի, քանի որ չի վերջացել։

Մարտի 2 (և. շ.).—Օրը խաղաղ կանցնի և ոչ մի անախորժ դէպք չի պատահել, բացի 5 սպանութիւնից և 13 գողութիւնից։

Մարտի 3 (և. շ.).—Գասպար Կալատուզովը Մոսկայից այսօր իր աշխատակիցների համար պրասի լէնտից կախած թուշի մեդալներ կուղարկի։ Դաշի պսլոոկով զիմաւորելու կըգայ խմբագիր Բախչոն։

Մարտի 4 (ուրբ.).—Ինչպէս լսում ենք ականջներով և տեսնում աչքերով, այսօր երեկոյեան ժամը... սակայն այս մասին հետաւեալ անգամ։

Ցիշատակարան

Ճշմարտութիւնը կամ դաղտնիքը կարելի է իմանալ մարդուց նրա քնած կամ հարբած ժամանակը։

Ատաղաձէտ—տոմարագէտ և օրացոյցագէտ

Փարեմուզ

*) Անցեալ շաբաթուայ օրացոյցիս մէջ մի պարոն գրածիս աւելացրել էր մի երկու տող պ. Շիրւանզադէի մասին, որը ինձ վրայ շատ վատ տպաւորութիւն թողեց։ Վերոյիշեալ պարոնը ինձանից ներողութիւն խնդրեց այդ անհեռատես և ագեղ վարմունքի համար։ Ես էլ իմ կողմից ներողութիւն եմ խնդրում յարգելի Շիրվանզադէից այդ սխալի համար։

Փարեմուզ

ՄՈԳԻՆ ՎՈՒՆՑ Ի ԼՈՒՍ ՆՆԳՆՈՒՄ

Էրեխէդ մերաշ հիւանդանում է, կնիկդ էլ ծընդան է ու վիրչի սահաթին է հասի, դուն էլ մենակ մարթ իս, շղկլած դէս ու դէն իս նընգնում, խան էս, խան էն հարևնի տունն իս մտնում, աղաչանք-պաղատանք անում, վուր մէ սահաթ դան տանդ նստին, ինչկլի դուն էրեխիդ համա դոխտուր ու կնգանդ համա էլ ակուշերկայ կանչիս։

Հարևնիրդ գալիս ին թէ չէ, կատղած դուս իս պրծնում ու Գոլովինսկի քուչով վազէվազ գնում իս։ Ինչ իս տեսնում, անցկեն

ეროვნული ბიბლიოთეკა

բենց տալի։ Տեհնում 'իս մուշտարի շատ կայ, ուզում իս դուս գայ. դրա դուռը շուռ իս գալի թէ չէ, էս խալիսը վրայ ին թափում տուն թռևում ու պարանովին աղաչանք անում, վուր իմ պատռած պինջակը լաւ անդղէ ու իրենցն էլ էնէնց ձևէ։

Գալիս իս տուն, կարկանիլ իս տալի ու գուրձիդ գնում, մինչվի դուքան հասնիլդ, եառսուն տիղ անգիդ դիփչում է «վուր ախմախացել իս, թաղա մոդնի պինջակիդ հդև ճղածը կարկանիլ իս տալ ու հին մոդնի շինի։

Վաղէվաղ հասնում իս դուքան, աշկրտիդ ձեռով պինջակդ ղրգում տուն ու ապսպրում, վուր կարածը նուր մէկանց քանդին։

—

Վաքսած, բանցը ցիլինդրի ունիս ծածկած, քամին փախցնում է, դուն էլ հիդը ննգնում իս, վուր բռնի. ինչվի կու հասնիս փայտոնի ակը վրէն անց է կենում ու թափ թաղա ցիլինդրիդ ճխլուում, շատ վուտդ չալիս իս գալի, ու էլ չի դրնուում, վուր շտապեցնում իս ինչ է ձերաց մէ ուրիշն առնիս։

Ջէր հինդ նարիջ չիս արի, վուր մէ դոխտուր փայտոնը կաղնեցնում է, դիվիր գալի, ցիլինդրուտ վարաւուրդ անում, իր ցիլինդրին էլ գցում փայտոնի տակը, իժում ծածկում ու քշիլ է տալի։

Էս բանի վրայ արմցած փնթփնթալով գնում իս, վուր տեհնում իս, քու ցիլինդրի թահրը ցիլինդրաւուրնիրը քիզ տեհտում ին թէ չէ, իրենց ցիլինդրիքն էլ վիր ին կալնում, վուտի տակը գցում, մէ քացի տալի, գլխին գնում, ու միթոմ վունչինչ անց կենում։

Վունց վուր ըլում է հասնում իս մէ մաղաղիայ։ Ինչ իս տեհնում, խազէինը, փրկաշիկներն ու բջիրը, ցիլինդրիքը կարոպկէքից մէ մէկ դուս ին հանում, քացի տակը գցում, էլի նուր մէկանց յիդ կարոպկէն գնում։ Ասում իս, ինձ սէ լաւ ցիլինդրի տէք, վուր իսկի ջարթած տիղ չունենայ.— «հին մոդնի իս ուզում,—հին մոդնի չունինք» ջուղաբ ին տալի, դուն էլ չարետ կարած քամու բերած մոդնի ցիլինդրով դուս իս գալի ու մէ քանիսին էլ աւտեցնում, վուր էդ թաղա մոդնի ցիլինդրին ամենքից առաջ դուն իս առի։

Ա՜յ, թէ վունց է մոդէք գալի։

Բախco



ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ

ԻՄ ՊՕՐՏՖԵԼԻՑ

VI

*Բոլոր վերազնահատումների արժէքի գնահատումը *)*

(Նուէր փիլիսոփայութեան յարգելի ուսուցչիս)

Մենք մեր մի շարք վերլուծողական յօդուածների ձևակերպումներով շեշտեցինք այն դիտողութիւնների բնագաւառի ինքնաբխման ելակէտը, որ անուանում է փիլիսոփայական թէօրիայ և որից առաջ գալով սկիզբն է առնում ինքաարժէքութեան բոլոր վերագնահատումների կենսաբերումի փաստերի ուսումնասիրումը։

Այդ այդպէս ձևակերպելուց յետոյ՝ ինքնաբխման բոլոր ուսումնասիրների փաստալից համոզումների հիման վրայ՝ պնդեցինք, որ կենսահայեցողութեան դիտողութիւնը՝ իրաւահայեցողօրէն արշաւակի գալիս է ժբխտելու այն վերագնահատիչ արժէքիզմի գնահատումի վերջանելիութիւնը, որ համարւում է կենսաբխումի և ինքնաարժէքաժբխտմենիզմի թէօրետիկ բնանահագը, այսինքն գործնականօրէն տեսականութեան մոնիզմի և կոմիզմի հետևանք։

Այս բոլորը մենք ասացինք պարզորոշ և որոշակի կերպով. կարծում ենք ամեն ինչ հասկանալի է ընթերցողին։ Այժմ անցնենք բնաբխումի և թեզական թէօրիաների փաստերի վերլուծականութեան անալիզին։

Ինչպէս յայտնի է բոլորին և ամենքը գիտեն, որ պոպերիզմի հետևանքը լինում է ֆեմինիզմը, կեղծ շահականութեան կամ շահիզմի մռայլ վարագուրով քողարկված արժէքաժխտումն, որից առաջ է գալիս, աւելի ճիշտն ասած՝ ինքնբխում է ex-շովիզմի և ex-ֆատալիզմի գունաւորման բնատեսակ կենսամօրալականութիւնը։

Այս այսպէս լինելուց յետոյ արդէն պարզ է թէ ինչ է գնահատման արժէքաւորումի վերագնահատութիւնը և նրա ատոմներից կամ հիլէներից բղխած վերաիմացականութեան թէօրիայի սկզբնաշարժի պատճառը։

(Շարունակելի)

Ֆօն-Սեհֆենսոն

*) Կարդացած է Թիֆլիսի փիլիսոփաների բնաժողովում, որի հեղինակը, որ մեր աշխատակից լինելու պատիւն ունի պարգևատրված է ադամանդազարդ ոսկէ մէդալով, և բացի այդ ստացել է գիտութիւնների համալսարանի գլխաւոր գիտնական-փիլիսոփայի տիտղոսը։

Դաճ. Խմբ.

ՆԻՒԻՐ ՕՐ. Ն. ԶԱՐԳԵԼԻՑ

Դեղեցիկ ես, ես այդ զիտեմ
Արժանի ես գովասանքի,
Սիրո՞ւն, փայլո՞ւն կապոյտ աչերդ
Ջինջ ցոլացումն երկնքի։

Դէմքդ բոլոր լուսնի նման
Թաւ յօնքերդ կամար, կամար,
Նուրբ վրձինն է կարծես նշխել
Անցումնքով լի կեանքի համար։

Սաթ մազերդ փուել ծալ ծալ
Կարմիր զոյգ վարդ թշիդ նստել,
Սեւ սեւ ու մութ ամպի տակից
Օ՜, լուսինն է կարծես ծագել։

Սակայն ի՞նչ է քեզ սպասում
Փոթորկի մէջ դաժան կեանքի,
Այդպէս անբիծ դու կրմնա՞ս,
Թէ զո՞հ կերթաս խանդոտ կրքի։

Ես կուզէի, որ դու սիրես—
Սրտի զեղումն յոյզ թանկագին
Ու անթառամ ծաղիկ լինիս
Սիրաբորբոք երգչի կուրծքին...

Արգար Պայազատ

ՕՐԻՈՐԴԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՍՈՍԻՆ

Յարգելի Կարս.

Ջեր նամակը առնելուն պէս, գնացի ուղղակի դէպի տուն. բայց սիրաս չհամբերեց, ճանապարհին բաց արի նամակդ և մինչև տուն հասնելը մի քանի անգամ կարդացի։ Տուն հասնելով, առանձնացայ փոքր սենեակը, դարձեալ կարդացի, որովհետև չէի հաւատում աչքերիս, նրա համար որ, տասնեակ նամակներ եմ ստացել զանազան երիտասարդներից, բայց ոչ մէկի մէջ չեմ կարդացել այն գովեստն ու առաջարկութիւնը, ինչպիսին է ձերը։ Ամբողջ գիշերը քունս չէր տանում, մտածում էի թէ՝ այս նամակը տամ ծնողներիս, թէ՞ ոչ. եթէ նամակը տալու լինիմ ծնողներիս, ազատած կըլինեմ «մօցիքուլի» Կատոին խոստացած քոթամից. և բացի այդ սուրը Սարգիսը կըզրկուի մատաղից. նրա համար որ մայրս խոստացել է մի սև աքլոր մատաղ անել, եթէ ես նշանուելու լինիմ։ Եթէ թագցնելու լինիմ, ինչպէս շատ անգամ արել եմ, դա էլ անհնարին է, որովհետև չեմ կարող թագցնել սրտիս անհուն ուրախութիւնը։ Եւ այսպէս ամբողջ գիշեր չկարողացայ վճռել անելիքս. լուսաբացին քունս տարաւ. բայց չգիտեմ թէ ինչպէս քաղցը երազներ եմ տեսել։ Առաւօտեան զարթնեցի այն

ეროვნული
ბიბლიოთეკა

Անչուշտ ճկուն ոտքերը յատուկ քաղաքականութեան հետևանք է։

ժամանակ, երբ մայրս ըղաւում էր «վեր կաց, դասիցդ կուշանաս»։ Թէ ինչպէս ուրախ տրամադրութեամբ գնացել եմ ուսումնարան՝ դա անկարելի է նկարագրել. այդ օրուայ սարսափելի ցուրտը ոչ մի ազդեցութիւն չունեցաւ իմ վրայ, նրա համար, որ միտքս զբաղած էր շարունակ քո նամակի բովանդակութեամբ։ Ուսումնարանում յայտնեցի միմիայն իմ սրտակից օրիորդ Հայկանուշին, որը նոյնպէս միայն մի սիրող ունի այժմ և մի քանի փեսացու փոխել է վաղուց։ Դասի ժամանակ փոխանակ գիրքս կարդալու, կարդում էի նամակդ, որ դրած էր գրքիս մէջ։ Մի ամբողջ դաս անցաւ, այն էլ պ. Մալեանինը, և նա ոչ մի նկատողութիւն չարաւ, որովհետև ինձ սիրում է։ Թւաբանութեան դասին վճռեցի, որ նախ և առաջ հարկաւոր է պայմանաւորուել միմեանց հետ, ապա յայտնել ծնողներիս, որովհետև՝

Ձեր քաղաքի հարսները ձեռք են պագնում։

—Ես ձեռք չեմ պագի—կարող եմ վարակուել։

Ձեր հարսները տուն ու տեղ են ունենում։

—Ես չեմ անի—դա ձեռքերս կըկեղտոտի։

Ձեր հարսները կար ու կարկատան են անում։

—Ես չեմ կարող անել—մատներս կըծակեմ։

Ձեր հարսները լացք են անում։

—Ես սովոր չեմ այդ անելու—ձեռքերս կըխաւարի։

Ձեր հարսները կեր ու կերակուր կանեն։

—Ես այդպիսի բաներ չկիտեմ—երեսս կըմրոտի։

Ձեր հարսները օտար մարդու հետ չեն խօսում։

—Ես չեմ կարող չխօսել, որովհետև ամբոխ կասեն։

Ձեր հարսները սկեսրոջ հետ տեղ են գնում։

—Ես սովոր չեմ ուրիշ մարդ ունենալ հետս—գաղտնիքս կիմանան։

Ձեր հարսները գլուխ են կապում։

—Ես չեմ կարող գլուխ կապել—կոս կասեն։

Ձեր հարսները բուրթ են մանում։

—Ես այդպիսի դատարկ բանի գլուխ չունեմ—անշնորք կասեն։

Այսքանը բաւական է. մնացեալ բաները պսակուելուց յետոյ կասեմ, եթէ Աստուած մուրազներիս հասցնի։ Մենք առ այժմս կարող ենք նամակով յայտնել մեր մտքերը. մինչև օրերը տաքանան, իսկ նրանից յետոյ կարելի է ամեն տեղ ժամադիր լինել։ Նամակս ուղարկում եմ փոքր քրոջս ձեռքով։ Եթէ դուք նամակ ուղարկելու լինէք՝ խնդրում եմ որ ուղարկէք իմ մշտական հասցէով՝

Тифлисъ, до васъ требованіе.

№ 1001. Աստղիկ։

Գտաւ և հրատարակեց Վարդի-Փուշ

ՀՆԱՐԱԳԻՏ ԲԺԻՇԿ

(Խելացի և հեշտ միջոց դաշտամկներ սպանելու)

Մի բժիշկ պատահմամբ անցնում է դաշտի միջով, որտեղ լինում են բազմաթիւ դաշտամկներ, որոնք սոսկալի վնաս են հասցնում ցանած արտերին։ Յուսահատ գիւղացիք ոչ մի կերպ չեն կարողանում այդ չարիքի առաջն առնել։ Նոյն իսկ փորձում են դաշտերում զանգակներով զանգահարել, բայց դարձեալ անօգուտ։ Բժիշկը տեսնելով գիւղացիների անել դրութիւնը՝ յայտնում է նրանց, որ ինքը կարող է մկներին ոչնչացնել. սակայն ոչ որ չէ հաւատում նրա խօսքերին, բայց նա պնդում է իր ասածը և խնդրում գիւղացիներին որ մի հատ մեծ մուկ բռնեն ու բերեն իր մօտ։ Գիւղացիները անմիջապէս կատարում են։ Բժիշկը մկան ոտքերին և պոչին կապում է փոքրիկ զանգակներ ու բաց թողնում։ Եւ ով զարմանք՝ մկները խրտնում են սարսափահար և այնտեղից արշաւում ուրիշ կողմեր։

Խարտեաշ

ՖԵԼԻԵՏՕՆ

ՏԻԿԻՆ ԼԻՒՆՕՅԻ ԳՈՐԾԸ

(Գիւի-դը Մոպասանի)

Հաշտարար դատաւորը, մի գէր մարդ՝ որի աչքերից մէկը բոլորովին փակ է, իսկ միւսը կիսաբաց, դժկամութեամբ ականջ է դնում գանգատաւորներին։

Մերթ ընդ մերթ մի մռնչիւն է արձակում՝ որ դուշակել է տալիս նրա կարծիքը և հարցեր է առաջարկում նեղ, կարծես թէ ժանկական ձայնով։

Նա հէնց այս բոպէին քննեց պ. պ. Ժոլիի և Պէտիպի գործը՝ վարելանոցը հերկելու ժամանակ նրանցից մէկի կողմից որոշուած սահմանը խախտման առիթով։

Հերթին դրուած է ժամկոչ և երկաթավաճառ Հիպոլիտ Լաքուրի գործը—Անթիմոս-Խիդորի այրու՝ տ-ն Սելեստուհի Կեսարինէ Լիւնօյի դէմ։

Հիպոլիտ Լաքուրը քառասունուհինգ տարեկան է։ Բարձրահասակ ու նիհար, մազերը երկայն են, իսկ երեսը կաթոլիկ քահանայի պէս ածիլած։

Տ-ն Լիւնօյին կարելի է տալ քառասուն տարի։ Վիթխարի կազմուածք ունի ու նեղ հագուստը զոռով է դիմանում նրա փարթամ մարմնին։ Անագին կոգքերը իրենց ծաւալով հաւիւ թէ փոքր լինեն կրծքից, որը դուրս է գալիս որոշած սահմաններից. յետևից դուրս են ցցել հաստ՝ ինչպէս ծծեր, ուսերի թիակները։ Մարմնի վիզը պահում է խոշորագիծ դէմքով գլուխը։

Նրա զօրեղ, թէև բաւականին բարձր ձայնը արձակում է հնչիւններ՝ որոնցից տատանուում են լուսամուտի ապակիները և ականջի ցնցուղները։ Նա յոյժ է և դուրս է պրծցրել ատագին՝ ինչպէս մի լեռ, փորը։

Վկաները պաշտպանութեան կողմից հերթի են սպասում։

—Հիպոլիտ Լաքուր ձեակերպեցէք ձեր պահանջը։

Դանգատաւորը սկսում է.

—Ահա թէ ինչպէս պատահեց այդ, պ. դատաւոր։ Ս. Միքայէլ հրեշտակապետի օրը ինն ամիս կըլրանայ, որ մի անգամ, երբ ես երեկոյեան ժամասացութեան զանգակը տալիս էի, տ. Լիւնօն եկաւ մօտս և յայտնեց ցանկութիւնը իր ամլութեան պատճառով...

Հաշտարար դատաւոր.—Խնդրեմ աւելի պարզ ասէք։

Հիպոլիտ.—Այս բոպէին ես բոլորը կասեմ, պ. դատաւոր։ Նա կամենում էր երեխայ ունենալ և իմ աջակցութիւնս էր խնդրում։ Ես ոչինչ չունէի դրա դէմ և նա խոստացաւ ինձ հարիւր ֆրանկ։ Ամեն ինչ պայմանաւորեցինք, վերջացրինք, և յանկարծ այժմ նա ուրանում է իր խոստումը։ Ձեր ներկայութեամբ, պ. դատաւոր, ես պահանջում եմ այն՝ ինչ որ խոստացած էր ինձ։

Հաշտ. դատաւոր.—Ոչինչ չեմ հասկանում։ Դուք ասում էք, թէ նա կամենում էր երեխայ ունենալ։ Ի՞նչպէս։ Ի՞նչ տեսակ երեխայ։ Երեխայ որդեգրելու համար։

Հիպոլիտ.—Ասում եմ այն երեխայի մասին՝ որը պիտի ծնէր, որը կըպատկանէր մեզ երկուսիս, ինչպէս մարդու և կնոջ։

Հաշտ. դատաւոր.—Դուք ինձ չափազանց զարմացնում էք։ Ի՞նչ նպատակով նա մի այդպիսի անբնական առաջարկութիւն արաւ ձեզ։

Հիպոլիտ.—Պ. դատաւոր, առաջ ես ինքս էլ գլխի չընկայ, ըստ որում շատ զարմացած էի։ Բայց որովհետև ես ոչինչ չեմ ասում առանց լրիւ հաշիւ տալու ինձ, ուստի կամեցայ իմանալ նրա պատճառները, և նա բացատրեց ինձ։ Ահա թէ ինչումն է բանը։ Նրա ամուսին՝ Անթիմոս-Խիդոր, որին դուք լաւ ճանաչում էիք, մեռաւ մի շաբաթ դրանից առաջ։ Նրա բոլոր կայքը պիտի բաժին հասնէր ազգականներին։ Հասկանալի է, կինը չէր կամենում այդ, մանաւանդ փոքի պատճառով, և դատաւ մի իրաւաբանի՝ որը բացատրեց նրան ինն ամ-

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԻՄ ՊՕՐՏՖԵԼԻՅ

III

*Երկնակապոյտ *)*

Եւ յոգնած մենակ, մղձաւանջային ճիրանների օղակներում՝ կանգնած էի ես քնքոյշ ճահիճի սաւերում։ Լսում էի գորտերի ներդաշնակ հրաշալի և զեղուճալից նւագը, ու լողացրած երեխայի նմանող սիրտս՝ գերմարդօրէն ու պայծառօրէն հրճւում է այդ երգի բեկ-բեկ, թովիչ երէկների զիւթանքից։ Ու այծերի նման յոգնած մաքերս արշաւակի, փղերի կարաւանի նման սաւառնում էին գանգիս մթագնած հորիզոնի եթերով և զեղին աքաղաղների նման կառւառում էին իմ երկրագնդից հիւանդ ուղեղը։

Շուրջս հովը բղաւում էր եղան նման և հորթը կորցրած կովի պէս վազում հարթ առապարներով, ու հաստատուն, անսասան դարաւոր մագերս օրօրւում էին տերեւաթափ, դալուկ կաղնիների նման և ահաբեկւած երկիւղով ճանչում շնորհալիօրէն։

Ոտքերս, որպէս բարդենիներ տարուբերւում էին երկրագնդի նենգաւոր պառոյտից, և ես գորտերի չքնաղ ու զիւթիչ երգի ազդեցութեան տակ՝ լաւայով ու կրակով լեցուն լեռան նման՝ հրաբուղ էի արձակում դէպի ճահիճի և մահիճի ստորոտները, որտեղից ամպի թեւերով գալիս էր հրաշագեղ ու բուրաւէտ նւագը։

Այդ օրը արեւը կաքաւի նման քայլում էր երկնակապոյտ եթերի ուսով և պայծառ ճաղատ գլխի նման ժպտում։

—Օ՜, իմ լողացրած երեխայի նման սիրտ, դու բոլ է ինչ որ գոմշի նման մրընգացիր բոլ է ոռնաս ցերեկ և լոյս գիշերում... Դադարիր, և լուր ականջ դիր գորտերի այս չնաշխարհիկ, թովիչ նւագ-մեղեդուն ..

Տես ինչպէս երջանկօրէն են նւագում և երկնակապոյտ երկիրը ծունր դրած, մի մարդու նման ականջ է դնում նրան և բերկրանքից նւագում արեւի քայլերի տակ։

Դադարիր, սիրտ իմ, դու լողացած և կապոյտ երեխայ։

Լսիր,

Եւ մի մոռանար...

—Երկնակապոյտ, ձմեռնայնօրէն բոցեղէն շնչով համբուրում եմ քեզ։

—Ա՜խ, երկնակապոյտ... Երգերի նւագ, գորտերի նւագ աղօթում եմ Ձեզ...

Ֆօն-Սանֆենսոն

*) Այս «երկնակապոյտ» կոչւածը նոր հոսանք է գրականութեան մէջ, որի նախահայրն է մեր աշխատակից Ֆօն-Սանֆենսոնը, և նրան է պատկանում առաջին դափնին, որպէս նոր հոսանքի ներկայացուցչի։

Խմբ.

ԵՐԿՆՔՈՒՄ

ՏՈԼՍՏՈՅԸ ԱՌԱՔԵԼԻՍՈՅՆ

(Այն մոլորակի վրայի մեր մանաւոր թղթակցից)

Տոլստոյը բարձրացաւ երկինք։ Յոգնած նա հասաւ դրախտի դրան, որտեղ նրա առաջ դուրս եկաւ դռնապան Պետրոսը։

—Ի՞նչ էք որոնում դուք այստեղ, հարցրեց նրան դրախտի դռների այդ պահապանը, կասկածոտութեամբ դիտելով նրան։

—Ես եկայ որոնելու Գերագոյն պետութիւնը, պատասխանեց Տոլստոյը։

—Բայց, դուք ո՞վ էք։

—Տոլստոյը։

—Ի՞նչպէս։ Արդեօք դուք այնտեղ, ցածրում չէք քարոզել, որ Եղիսէը երկրի վրայ է։

—Այո՛, սակայն այնտեղ ես նրան չգտայ և եկայ Նրան որոնելու նախ այստեղ. արդեօք դուք ինձ կըթոյլատրէ՞ք ներս մտնել։

—Սպասեցէք, ասաց Պետրոսը և ներս գնաց զեկուցանելու, անսովոր հիւրի մասին։

Կարճ ժամանակից յետոյ Պետրոսը ներս հրաւիրեց Տոլստոյին։

Ռաֆայէլը դրախտի քէօշքի (kiosko) մէջ, շրջապատւած ալբիւրներով և կանաչ թուփերով, նստած էր իր ոսկէ ու սատաֆէ աթոռի վրայ։

—Ինչպէս էք անցկացրել ձեր երկրային

սից յետոյ ծնելու դէպքը։ Այսինքն ես կամենում եմ ասել, թէ եթէ նա ազատէր Անթիմոս-Իսիդորի մահից տասը ամիս յետոյ, երեխան օրինաւոր կըհամարւէր և կըպահպանէր իր իրաւունքները ժառանգութեան նկատմամբ։ Նա վճռեց իսկոյն և եթ ապահովել այդ հետեւանքները և եկեղեցուց դուրս գալիս, ինչպէս արդէն յայտնեցի ձեզ, դիմեց ինձ, որովհետև ամենքը գիտեն՝ որ ես ութը որդոց հայր եմ, բոլորը կենդանի են, որոնցից անդրանիկը կրպակ ունի Կաննում՝ Կալլադոս նահանգում և ամուսնացած է օրինակոն կերպով Վիկտորուսի-Էլիզ Ռաբուի հետ...

Հաշտ. դատաւոր.—Այդ մանրամասնութիւնները աւելորդ են։ Խօսեցէք գործից։

Հիպոլիտ.—Ես շարունակում եմ, պ. դատաւոր։ Եւ այսպէս նա ասաց ինձ.—«Եթէ այդ գլուխ եկաւ՝ ես կըտամ քեզ հարիւր ֆռանկ, հէնց որ բժիշկը որոշեց իմ յղիութիւնս»։ Ահա ուրեմն, պ. դատաւոր, ես ամեն ջանք գործ դրեցի նրա խնդիրը գոհացնելու։ Վեց շաբաթ թէ երկու ամիս յետոյ ես ուրախութեամբ իմացայ՝ որ բանը դրստւել է։ Բայց երբ կամեցայ ստանալ հարիւր ֆռանկը, նա չտւեց ինձ։ Ես մի քանի անգամ պահանջել եմ այդ նրանից, բայց ոչնչից ոչինչ չեմ ստացել։ Նա ինձ նոյն իսկ «աւազակ» և «անընդունակ» է անւանում։ Բայց կարծեմ հարկաւոր է միայն նայել վրան՝ որ տեսնել հակառակը։

Հաշտ. դատաւոր.—Ի՞նչ կասէք դուք, ա. Լիւնս։

Տ. Լիւնս.—Պ. դատաւոր, ես հաստատում եմ, որ այս մարդը ծովային աւազակ է։

Հաշտ. դատաւոր.—Ինչո՞վ կապացուցանէք դուք այդ։

Տ. Լիւնս (բոլորովին կարմրատակած և շնչասպառւելով).—Ի՞նչով կապացուցանեմ։ Ինչով կապացուցանեմ։ Ես ապացոյց չունեմ, իսկական անմիջական ապացոյց չունեմ, որ երեխան նրանը չէ։ Բայց սա նրանը չէ, պ. դատաւոր, երդւում եմ հանգուցեալ ամուսնուս գլխովը՝ որ այդ ճիշտ է։

Հաշտ. դատաւոր.—Հապա ո՞ւմն է, եթէ այդպէս է...

Տ. Լիւնս (զայրոյթից հազիւ շունչ քաշելով).—Ո՞րտեղից գիտեմ ես։ Ո՞տեղից։ Այո՛։ Ահա իմ վկաներս, պ. դատաւոր, նրանք բոլորը այստեղ ներկայ են։ Վեց հոգի են։ Հարցուփորձ արէք սրանց, հարցրէք սրանց... Սրանք կասեն...

Հաշտ. դատաւոր.—Հանգստացէք, տիկին, հանգստացէք և պատասխանէք առանց յուզւելու։ Ի՞նչ հիմք ունէք դուք կասկածելու՝ թէ այս մարդը չի կարող հայր լինել երեխայի, որին դուք կրում էք։

Տ. Լիւնս.—Ի՞նչ հիմք։ Ես ունեմ հարիւր, երկու հարիւր, հինգ հարիւր, տասը հազար, միլիոն և նոյն իսկ աւելի հիմք։ Աչքի առաջ ունենալով՝ որ իմ առաջարկութիւնից յետոյ, ինչպէս որ գիտէք, հարիւր ֆռանկ խոստումով, ինձ հաղորդեցին.—Ներելի լինի ասել, պ. դատաւոր,—թէ սա իր կնոջից խաբւած է և սրա բոլոր երեխայքը իրանը չեն, իրանը չեն, մեկից մինչև փոքրը...

Հիպոլիտ.—(հանդիստ). Այդ սուտ է...

Տ. Լիւնս (կատաղած).—Սուտ է։ Լա՛ սուտ է։ Համարձակւում է ասել... Սրա կինը բոլորի հախից կպչում էր, այո՛, բոլորի՛, ասում եմ ձեզ։ Ահա իմ վկաներս, պ. դատաւոր։ Հարցուփորձ արէք սրանց, հարցուփորձ արէք։

Հիպոլիտ (սառը կերպով).—Այդ սուտ է։

Տ. Լիւնս.—Ի՞նչ է ասում սա։ Իսկ շիկակարմիրները։

Հաշտ. դատաւոր.—Խնդրեմ անձնաւորութիւնը մի կողմ թողէք, ապա թէ ոչ հարկադրւած կըլինեմ պատժել ձեզ։

Տ. Լիւնս.—Եւ ահա, կասկածելով դրա ընդունակութիւնների մասին, մտածեցի՝ թէ աւելի զգուշութիւնը չի խանգարի։ Եւ այն ժամանակ ես ամեն ինչ բացատրեցի ահա այս վկային, Կեսար Էբրիկին։ Իսկ սա ասաց.—«Պատրաստ եմ ծառայելու ձեզ՝ տ. Լիւնս»։ Ու ինձ աջակցութիւն մատուցեց այն դէպքի համար, եթէ Հիպոլիտինը անյաջող լինէր։ Յետոյ, յամենայն դէպս ես նախօրօք ձեռք բերեցի և միւս վկաներիս աջակցութիւնները։ Եթէ կամենայի միայն

կանքը Լև Նիկոլաևիչ, հարցրեց նրան Ռաֆայելը։

—Լաւ, ես բարոգում էի երկրի վրայ փոխադարձ սէր և համեստ կեանք։

—Լև Նիկոլայևիչ, դուք կապրէք այստեղ՝ Եդեմում։ Ես կտամ ձեզ դրախտի ամենագեղեցիկ պալատներից մէկը, սակայն դուք պէտք է հաշուէք ըստ պատշաճի։

—Ո՛չ, ներեցէք, ես սովորած չեմ փարթամութեան, ասաց Տոլստոյը և ատելութեամբ նայեց այդ ճոխութեան և շքեղութեան, որոնցով շրջապատուած էր Ռաֆայելը։

—Այստեղ բոլորը պէտք է հնազանդուեն տեղական կարգերին։ Մանաւանդ դուք, որովհետև ձեր տարազով նմանւում էք գոհիկ գիւղացու։

—Այդպիսի դէպքում, ասաց Տոլստոյը, ես կը հեռանամ։

Եւ թափառում է նա երկնքի դատարկութեան մէջ, ու որոնում մի նոր դրախտ։

Էսպէրանտերէնից թարգմանեց **Կար-Դեան**





Հարց ու պատասխան

Աշակերտ.—Վարժապետ, դուք մեզ ասացիք, որ Սոդոմ-Գոմորի մարդիկը կործանեցան իրենց մեղքերի համար, հապա մեր Թիֆլիսն ինչու չի կործանւում, որ այսքան մեղքեր են կատարւում։

Ուսուցիչ.—Երևի այստեղ հինգ արդարից աւելի կայ։

N.

Գանձակեցի վաճառականը

Գանձակեցի մի վաճառական հայտնեցնում է մի քանի տեսակ ապրանքների արկղների վրայ մեծ-մեծ տառերով գրած осторожно բառը, կարծելով՝ թէ բոլոր ուղարկելիք ապրանքների վրայ պէտք է գրել «осторожно» բառը, մի օր եօվշանի աւելներ ու ճերմակներ ուղարկելու ժամանակ՝ հակերի վրայ գրել է տալիս «осторожно»։

—

Նոյն գանձակեցու նամակը։

Սիբելի եղբայր օրչեստաւայ վզայիմի կրեդիտ, առաջինը բարևում եմ եղբայր օրչեստաւին վզայիմի կրեդիտին ու իրենց ընտանիքներով։ Երկրորդ եղբայր օրչեստաւայ ուղարկում եմ մուրհակով պարտքս, խընդրում եմ մուրհակը զրկէք ինձ։ Իմ տան նօմերը չեմ գրում, ես այնպէս էլ յայտնի եմ, բոլորն ինձ ճանաչում են։ Կր՛ին բարևում եմ եղբայր վզայիմի կրեդիտին և առողջութիւն եմ կամենում, որ երկար օրեր սաղ ըլէք։

Ցարգանով՝ Պետրոս Մատիչեան

Իսկականից արտագրեց **Օզրգալդի**

պ. դատաւոր, կարող էի գտնել աւելի քան հարիւր վկայ։ Եւ ահա այս բարձրահասակը՝ Ղուկաս Շանդելիէն երդւում էր՝ թէ ես դուք տւած կըլինեմ հարիւր ֆռանկը Հիպոլիտ Լաքուրին, որովհետև նա աւելի չէ արժանի դրան, քան միւսները, որոնք ոչինչ չեն պահանջում։

Հիպոլիտ.—Զպիտի խոստումներ տայիք։ Ես յոյս էի դրած այդ դրամի վրայ, պ. դատաւոր։ Ես թիւրիմացութիւն չեմ թոյլ տալիս. եթէ խոստացել էք, պիտի վճարէք։

Ս. Լիսնօ (կատաղած)։ Հարիւր ֆռանկ։ Հարիւր ֆռանկ։ Հարիւր ֆռանկ այս աւազակին։ Հարիւր ֆռանկ։ Իսկ սրանք ոչինչ չեն պահանջել ինձանից, ամենևին։ Ահա սրանք այստեղ են բոլորը, վեց հոգի։ Խնդրեմ հարցուփորձ անէք սրանց, պ. դատաւոր։ Սրանք ամեն ինչ կըպատմեն ձեզ։ (Հիպոլիտին) Դու էլ լսիր սրանց, աւազակ, սրանք քեզանից մի քիչ լաւ կըլինեն։ Վեց հոգի են, բայց ես կարող էի գտնել հարիւր, երկու հարիւր, հինգ հարիւր, որքան կամենայի—և ձրի։ Աւազակ։

Հիպոլիտ.—Թէկուզ հարիւր հազար։

Ս. Լիսնօ։ Այո, եթէ կամենայի և հարիւր հազար։

Հիպոլիտ.—Այնուամենայնիւ ես կատարեցի իմ պարտականութիւնները... այդ չի փոփոխում մեր պայմանագրութիւնը...

Ս. Լիսնօ (զարկելով իր փորին երկու ձեռքերով).—Բայց այն ժամանակ ապացուցէք՝ թէ սա քո գործն է, ապացուցէք, ապացուցէք, աւազակ։ Տեսնենք՝ ինչպէս ես ապացուցանում այդ։

Հիպոլիտ (սառնարիւնութեամբ).—Կարելի է, որ ես միւսներից աւելի բան չեմ արել, բայց դուք յատկապէս ինձ էք խոստացել հարիւր ֆռանկ։ Ինչու էիք յետոյ դիմում ուրիշներին։ Այդ ոչինչ չէ փոփոխում, ես ինքս մենակ էլ բոլորը կանէի։

Ս. Լիսնօ.—Սուտ է։ Աւազակ։ Հարցուփորձէք իմ վկաներիս, պ. դատաւոր, նրանք բոլորը կասեն։

Հաշտարար դատաւորը դուրս է կանչում պատասխանատուի վկաներին։ Նրանք վեց հոգի են, բոլորը կարմրատակած, ձեռքերը կախ գցած, շփոթուած։

Հաշտ. դատաւոր.—Ղուկաս Շանդելիէ, հիմք ունէք արդեօք ենթադրելու՝ թէ դուք հայրն էք երեխայի, որին կրում է արգանդում տ. Լիսնօն։

Ղուկաս Շանդելիէ.—Այո, պարոն։

Հաշտ. դատաւոր. — Սելեստէն-Պետրոս Սիդուան, հիմք ունէք արդեօք ենթադրելու թէ դուք հայրն էք երեխայի, որին կրում է արգանդում տ. Լիսնօն։

Սելեստէն-Պետրոս Սիդուան.—Այո, պարոն։

Մնացեալ չորս վկաները տալիս են միևնոյն պատասխանը։

Հաշտարար դատաւորը քիչ մտածելուց յետոյ՝ յայտարարում է.

«Ի նկատի առնելով, որ թէև Հիպոլիտ Լաքուրը հիմք ունի իրեն հայր համարելու այն երեխայի՝ որին կամենում էր ունենալ տ. Լիսնօն, յիշեալ Ղուկաս Շանդելիէ և այլն ունեն նոյն, եթէ ոչ աւելի, հիմքը՝ իրենց այդ երեխայի հայրը համարելու։ Բայց ի նկատի առնելով, որ տ. Լիսնօն ամենից առաջ աջակցութեան համար դիմել է Հիպոլիտ Լաքուրին, խոստանալով նրան հարիւր ֆռանկ իբրև վարձատրութիւն.

«Ի նկատի առնելով, որ թէև մի կողմից կարելի է հաւատալ Լաքուրի յայտարարութեան, բայց միւս կողմից կարելի է ժըխտել նրա իրաւունքը իր վրայ այդպիսի պարտաւորութիւն առնելու, աչքի առաջ ունենալով՝ որ դանդատաւորը ամուսնացած է և օրէնքով պիտի հաւատարիմ մնայ իր ամուսնուն.

«Ի նկատի առնելով և այլն, և այլն, և այլն, տ. Լիսնօն դատապարտւում է վճարել քսանուհինգ ֆռանկ ՀԼասի փոխարէն պ. Հիպոլիտ Լաքուրին վատնած ժամանակի և նրան անառակութեան մէջ գցելու համար»։

Մ. Ե.



ՄՏՔԵՐ

Աղէսի ստերումը չեմ՝ քնի.
Թող տարիներն ինձ ուտի,
Տարիների կամրջովը չեմ՝ անցնի,
Թող հեղեղը ինձ տանի.

Ն.

№ 1 „ՔԱՄԻ“ № 1

Գրական, հրապարակական, քաղաքական և գիւղական լոթիրազական կուլ-տուր-ական, թայֆական և հայհոյական, գնքական և այլն և այլն «ական» թերթ, որը լոյս կը-տեսնի երկու շաբաթը մի անգամ, հզորա-գոյն «Խաթաբալա»-ի ոսկէտառ էջերում։

Թերթիս աշխատակցելու են՝ Դեօզալ-Աղաբաջի, (պէտ և պրէդուոդիտէլ համայն Կովկասի հայ և օտարազգի սուֆրա-ժիստ-կանների), Փիստոն Ճլթեան, (օրգինատոր և արէնդատոր հնագոյն—Նախիջևանի նորա-գոյն համալսարանի), Փալանդուզ Մկո, (միակ պատրաստողը՝ ժամանակակից ազ-գային գործիչների անհրաժեշտ զարդ-փալանի) և այլ յայտնի և անյայտ, կենդա-նի, մեռնելու պատրաստուած և արդէն մե-ռած գրականագէտները։

Մեր դէ-իզն է՝—գնալ դէպի այն կողմը ուր քամին կը տանի։ Սա այժմ մեր մա-ժուլում ամենաընդունակ և յարգուած ուղ-ղութիւն է, ուստի մենք էլ հետ ետ չենք ուզում։

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ

Բազմ.

Այսօր և այս տարի.
Քամի...
Ну да, քամի...
Ուր որ փչի՝
Մեզ կը տանի...

Կը տանի... ուր կը տանի... Սատանան գիտէ, թէ ուր կը տանի... էդ ինչու մեր այժմեան հայ թերթերը չեն իմանում, թէ ուր կը տանի, հենց մենք պէտք է իմա-նանք...

Քամի... այդ ժամանակիս միակ զեկն է, որին հետևում են բոլորը, և անխօս գը-նում։

Գնում են...

Մենք էլ գնանք։

——

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Ցրտերը շարունակւում են։ Լուր կայ, որ այս տարի ձմեռը մի քանի ամիսներ պի-տի փոխ առնէ գարունքից։ Վերարկու չու-նեցողները և վառելափայտ առնելով մնան-կացածները մի պատգամաւորութիւն ու-ղարկեցին Պանի մօտ, բայց ճանապարհին պատահեցին քաղաքային դումայի պատգա-մաւորութեանը, որը գնում էր միջնորդել՝ այս տարի խստաս գարունք և ամառ չտեսնելու, որի ժամանակ աներես խոլե-բան (այս տարի թերևս և ժանտախտը) գլուխ է բարձրացնելու քաղաքի փողոցների ցեխերից։ Ճանապարհին կուելով, մի քանի գլուխներ են ջարդում և այժմ նստած են Սաթայէլի բանտում, ու դատի են սպա-սում։

—

Այսօր փողոցում գտնուեցին մի խումբ քնած մարդիք։ Զնայած սաստիկ ցրտին՝ բարձր խորմփացնում էին։ Ինչպէս պարզ-ւեց՝ դրանք Հրատարակ. Ընկ. տեղիս ճիւղի վարչ. անդամներն էին։

—

Գասպար աղա Կալատուզեանի նոր գնած ֆիրմայում ծառայողները գործադուլ են յայտարարել, առաջադրելով մի շարք պա-հանջներ։ Սպասում են իրա, Գ. Կալատու-զեանի կարգադրութիւններին։

——

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՈՐԻՍ (*Զանգ. գաւ*).—

Ապրում ենք։ Էն էլ՝ կարգին։ Քաղաքիս փողոցները լուսաւորում է էլէքտրակա-նութեամբ. բայց, зато ցեխը՝ քաղաքի «մեծ» մարդկանց հասակից բարձր է։ Քա-ղաքացիները արդէն զարգացել են, այն էլ այնքան, որ էլ աւելորդ համարեցին դրա-դարան ընթերցարան պահելը և «փառա-ւորապէս» փակեցինք։

Միլլան

—

ԵՐԵՒԱՆ.—

Քաղաքը իրարանցման մէջ է։ Քաղաքումս լոյս է տեսել մի ազմկարար... թերթ!!... Հանգստութեան և անդորրութեան սովոր երևանցիք՝ շատ են զայրացած այդ սկանդալի առթիւ և վճռել են, կամ իրանք մեռնեն, կամ թերթին սպանեն։ Դէպքերի մա-սին կը գրեմ։

Շտուրմցի

—

ՊՈՍՏ-ԱՐԿԱ

Հին-Նախիջևան։ Ինաշեանցին.— Ձեր էդ գետինը մտած հոդուածներին ասա որ՝ լաւ պահեն իրանց, թէ չէ Սատանան բէգի ապիզ մերուքը վկայ պատկերները «Խա-թաբալա»-ում թարս կը տպենք և «Բամու» բերան կը տանք։

Մեր թղթակիցներին.—Ի սէր Աստծոյ, տեղիդ աւելի լուրջ բաները թողած, աւելի լաւ է գրէք ձեր ագրարների, տիրացուի և եղանակների մասին։ Մենք «Մշակ»-ից ինչով են պակաս։

Խմբագիր-հրատարակիչ՝ Բազի և նրա շրջակայքի Խաթաբալիստների լիդեր՝

Կլլան Ցակովը

ՆՈՐՈՒԹԻՒՆ

Մի «Մշակ» իր նոր «Տարազ»-ով կար-ուած շորերը տարել է «Աղբիւր» լուանալու և գիտէք ինչ «Խաթաբալա»-ի մէջ է ընկել։ Ինչպէս պատմում է «Հորիզոն»-ում սլացող մի «Սուրհանդակ», «Դարբին»-ը «Հովիտ»-ում բուսած «Հասկեր»-ի միջով գալիս վերցնում է այդ շորերը և ձգում շիկացած երկաթի «Դայցեր»-ի մէջ։

Տարօրինակ մարդ է այդ դարբինը, զբ-պանում մի «Լումայ»-ի կտոր անգամ չու-նենալով, ուզում է գնել մի «Արօր», «Գիւ-ղատնտես» ութեամբ պարապել և դրանից գոյացած արդիւնքով մի «Նոր դարոց» բաց անել, որտեղ իբր թէ պէտք է դասախօսեն «Գեղարուեստ»-ի և «Ազգագրական հան-դէս»-ի խմբագիրները։

Ի՞նչ էք կարծում, կը յաջողի՞ էդ բանը։

Փարեմուզ



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՈՒՍՏՐԸ

—Հայրիկ, խնդրում եմ ասես, ինչքան օժիտ ես տալու,
Սերեսօժը ինձ սիրում է, լաւ է հիմի ամուսնանամ,
քան թէ վերջը տանը մնամ։

ՏՈՒՏՈՒՑ ԽՕՄ ՉԻՄ

—Վուրթի պակուի էլի, էլ ինչ իս սպանում ու
սպասեցնիլ տալի վիզ. բարեկենդանը անցնում է։
—Է՛... բան չունիք, ասօթ չէ՞, հիմի կանայքը ինչ կասին,
որ ես պակուիմ. գիժ խօմ չիմ... գլուխս
պահիլ իմ ու հիմի ջուրը ընկնի՞մ, չէ Աստուած ոչ անի։

ԷԼԻ ՄՆԱՑԻՆ

—Բարեկենդանը անցաւ. մի տարի էլ մնացինք տանը. էսպէս որ գնայ էլ երբ պէտք է ամուսնանաք։
—Ի՞հ, քա. արժի հիմի ամուսնանալ. այ ես քառասուն ութ տարեկան եմ և էլի չեմ ուզում պսակուիլ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

ԽԱԹԱԲԱԼԱ

կոմպլեկտներ

ԾԲԵՂ ԳԱՆԱՁՄՈՎ

1906 թ. . . . . 5 ր.
1907 թ. . . . . 7 ր.
1908 թ. . . . . 7 ր.
1909 թ. . . . . 7 ր.
1910 թ. 7 ր.

Հին համարները հատով Թիֆլիսում 10 կոպ., Թիֆլիսից դուրս 12 կ.։
Դիմել՝ «Խաթաբալա»-ի գրասենեակին։

Բացված է 1911 թ. բաժանորդագրութիւն

„ԼՈՅՍ“

Գրական-Հասարակական շաբաթաթերթի։

(Երկրորդ տարի).

„ԼՈՅՍ“-ի բաժանորդագինը.—Ն. Նախիջևանի, Ռոստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տար.-3 ր. կէս տ.-2 ր. 3 ամ.-1 ր.։ Ռուսաստանի այլ տեղերի համար—տարեկ. 4 ր., կէս տար.-2 ր. 50 կ. և 3 ամ.-1 ր. 50 կ.։ Արտասահ. տար.-6 ր. կէս տարին 3 ր. Համարն ամեն տեղ արժէ 10 կոպ.։

Հասցէն՝ Нахичевань н-Д. Въ редикцію армянск. журнала „ЛУЙСЪ“.

Խմբ.-Հրատ. Բժ. ԳԷՈՐԳ ՌԷԻԶԵԱՆ.

МАГАЗИНЪ

Композиція

Тифлисъ. Пушкинскіи пассажъ № 8

ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ

шведскаго композиціон. бѣлья.

Носитсяъне менѣе двухъ лѣтъ

Постоянный большой выборъ свѣжаго товара.

Воротниковъ, манишекъ и манжетъ.

по фабричнымъ цѣнамъ.

Передѣлка въ любой фасонъ безплатно

Продюются портняжныя принадлежности, какъ-то пугоицы, подкладки, мѣлъ и впрочѣе.

Имѣется также галантерейный Отдѣлъ

00—33 М. А. КАЛТАКЯНЦЪ

Ցանանկալով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարիք, մեք խոր հուրդ ենք տալիս բաժանորդագրուել և ամենօրեայ հայերէն ամենամեծ ու օգտակար

III ՏԱՐԻ **ՍՈՒՐՀԱՆԴԱԿ** III ՏԱՐԻ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագրին, որ դեկտեմբերի 1-ից հրատարակւում է ամեն օր, այ ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օ ից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասա ռակութեանը։

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» տարեկան բաժնեգինն է 10 ր., կէս տարւանը 6 ր. Սակայն «ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդների համար պատրաստ ենք զիջել տալ հետևեալ գներով.

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“ ԵՎ „ԽԱԹԱԲԱԼԱ“ միասի

Տարեկան . . . . 12 ր. ◎ Երեք ամիսը . . 4 ր. — կ
Կէս տարին . . . 7 ր. ◎ Ամիսը . . . 1 ր. 50 կ

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Сурандакъ“,
Հեռագրով՝ Тифлисъ, „Сурандакъ“

ՊԱՏՐԱՍՏԻ ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ԽԱՆՈՒԹ

ԿԻՐՃԲԱՈՒՄԻ ԵՒ ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

ՍԵԶՈՆԻ ՀԱՄԱՐ ՍՏԱՑՒԱԾ

Գոլովինս. պրոսպ. տ. Զուբալովի

ԵՆ մեծ քանակութեամբ ամեն տեսակ ապրանքներ—ռուսական և արտաոտանական ֆաբրիկաներից։ Բոլոր ապրանքները ձեռք են բերուած առաջին ձեռքից և նշանակած են ԾԱԾԼԻԹԱՆ ԴՆԵՐ

Օտար քաղաքների պահանջները կատարւում են

ՇՈՒՏԱՓՈՅԹ ԵՒ ՃՇՏՕՐԷՆ

00—2

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԴԻՐՔՈՎ ԱՌԱՋԻՆ ԱՐԱԳԱՑԻՊ ՄԵՔԵՆԱՆԵՐ

ԽՐՕՄՕ-ԼԻԹՕԳՐԱՖԻԱ

Ա. Ի. ՌԻԽՈՎԻ

(ԵՐԱԵՄԱՆԻ ԵԱԿՇԱՏԱՍ.)

Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Օրոյեանի, տելեֆոն № 433.

Յայտնում է ի գիտութիւն պ. պ. պատէր աւորների, որ վիմագրատունը ամբողջովին իմ սեփականութիւնը դառնալով, նշանաւոր չափով ընդարձակւեց և աւելացաւ նոր կոնստրուկցիայի և ամենամեծ դիրքի արագատիպ մեքենայով՝ իր բոլոր օժանդակիչ պարագաներով։ Այս հանգամանքն ինձ հնարաւորութիւն է տալիս պատէրները կատարել շուտ, ճշտութեամբը եւ ԱԻԵԼԻ ԷԺԱՆ միւս վիմագրատներից։ ցանկանալով վիմագրական գործը Կովկասում հասցնել իր արժանի բարձրութեան, ես չեմ խնայելու ոչ մի ծախս, որպէսզի բաւարարեմ ժամանակակից տեխնիկային։ Յոյս ունիմ, որ պ. պ. պատէր աւորները, առանց ուշադրութեան չեն թողնիլ վերև յիշածներս և կը պատւեն ինձ իրենց պատէրներով, իսկ ես իմ կողմից ամեն ջանք գործ կը դնեմ բաւարարելու պահանջները։

20—7 Ցարգանքներով—Ա. Ի. ՌԻԽՈՎ.

ՀՈՅՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԺԻՇԿ

Ե. Ի. Մինասեանց

Ներքին և երեխայոց և ստամոքս-աղիքային հիւանդութիւնների, պրոֆ. MATHIEU-ի մասնագիտական կլինիկայից Պարիզում։

Ընդունելութիւնը առ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ.։ Ելիզաւետինսկայա, 39։ 100—66

ԲԺԻՇԿ

ՓԱՆՕ ՄԱՆԴԷՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ։

Ընդունում է հիւանդներ իր սեփ. տանը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28.

00—67

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կըտեսնի

„ԿՐԱՆ"

Երգիծաբանական ժողովածուն բաղկացած 300-ից աւելի մեծադիր էջերից։ Գինն է մինչև լոյս տեսնելը 80 կ. Լոյս տեսնելուց յետոյ զգալի կերպով կըբարձրանայ։

Դիմել՝ Эривань, Мушегу Багратуни.

10—10

Открыта подписка на 1911 годъ

НА ДВУХНЕДѢЛЬНЫЙ ЖУРНАЛЪ

Промышленность и Торговля

органъ совѣта съѣздовъ представителей промышленности и торговли,

выходящій 1-го и 15-го чиселъ каждаго мѣсяца.

Подписная цѣна: на годъ 12 р., на полгода—7 р., съ пересылкой и доставкой.

Адресъ: С.-Петербургъ, Невскій, 100.

10—10

ԾԱԽԻՈՒՄ ԵՆ ԱՏՐՊԵՏԻ ԵՐԿԵՐԸ

ՎԻՊԱԿԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Պատկերներ», տասը պատ. Թիւրքահայերի կեանքից.	1 ր. — կ.
«Վիւքեալայի գաղտնիքը» » »	1 » — »
«Ալմաստ», 1 հատոր » »	1 » — »
«Ալմաստ», 2 » » »	1 » — »
«Զաւահիր», 77—78 թ. Ռուս. Թուրք. կուիս արկած	1 » — »
«Վիպակներ», երկու վէպ. Թրքահայերի կեանքից	1 » — »
«Բժժածները», երեք պատկեր » »	1 » — »
«Կարելի՞ է սիրել», պատմական վէպ	1 » — »

Ընտիր թղթի վրայ իւրաքանչիւր հատ, 2 ռուբլի

«Խև Կարապետ», Թրքահայ կեանքից	1 ր. — »
«Քոռ Եղիկ» » »	— » 30 »
«Շինոց» » »	— » 30 »
«Ժառանգներ» » »	— » 30 »
«Բերսայի Առաքելը» »	— » 25 »
«Թուլումբաջիներ» » »	— » 15 »
«Դիմակներ», երգիծական արկածներ	— » 50 »

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

	1 » — »
«Շուշան», երեք արարած. Թրքահայ կեանքից	— » — »
«Սարրաֆ», հինգ » » »	30 »

ՈԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

«Խիլլաֆաթ», պատմ. տեսութիւն Սիւննիների մասին	1 » — »
«Իմամաթ» » » Շիաների »	— » 50 »
«Հողատիրութիւնը Կովկասում»	— » 10 »
«Мамед-Али-Шахъ»	1 р. — »
«Имаматъ»	1 р. — »
Рахимъ-Ханъ «Сардаръ»	— » 20 »
Бабыты и Бехацты. Истор. разсл. цѣна	— » 60 к.

Արդէն պատրաստ է «Իրանի Պատուհասները» գինն 1 ռուբ.

Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցը։

Атрпетъ. Александрополь.

որոնց կըլինի սովորական 20% զիջումն։ 00—19

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 Թ.

„ԴԱՐԲԻՆ"

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

որ լոյս է տեսել Թիֆլիսում ներկայ փետրուարի 13-ից։

№ 1-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

1. Մեր շաւիղը—Դ. Տէր-Ղևոնդեանի. 2. Տղամարդացող կինը—Կլարա Նոլդէի. 3. Ծիծեռնակի երգը—Blaksmith-ի. 4. Բարեկամական խորհուրդ—Գէորգ Զէֆօնի. 5. Տարակո-Սարակո (վէպիկ գրպանահատների կեանքից) Դ. Տէր-Ղևոնդեան. 6. Մեխեր. I—Դէօ-Ղէօի 7. Փոստ-Նատոյի.

«ԴԱՐԲԻՆԸ» արժէ Թիֆլիսում տարեկան 2 ր., 6 ամիսը 1 ր. 20 կոպ., 3 ամիսը 60 կոպ.։ Թիֆլիսից դուրս. տարեկան 3 ր., 6 ամիսը 1 ր. 75 կ., 3 ամիսը 1 ր. Թիֆլիսում հատը 5 կ.։

«Խմբագրութիւնն ու գրասենեակը գտնուում են. Тифлисъ, Михайловскій пр. № 17—Վօրոնցովի արձանի մօտ և բաց են 6—8 ժամը երեկոյեան.

0—5 Խմբագիր-հրատարակիչ՝ Դ. Տէր-Ղևոնդեան

Ժամանակաւոր խմբագիր Ս. ՄՈՒՐԱՅԱՃԵԱՆ Электропечатня Т-ва „Культура", Вельяминовская, 18.

ՓԱՐԻԶԵՑԻՆԵՐ ՊԱՏՎԱԿՈՐ

ՄԵՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԻԱՆՑ ՄՏՔԵՐԻ ՓՈՒԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԸ Ը.Ը.

ეროვნული ბიბლიოთეკა